ԱՐԱՄ ԻՍԱԲԵԿՅԱՆ

Հիշողության վրձնահարվածներ

ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ ԱՐԱՄ ԻՍԱԲԵԿՅԱՆԸ ՀՀ ժողովրդական նկարիչ Էդվարդ Իսաբեկյանի եւ նկարչուհի Արփենիկ Նալբանդյանի որդին է:

Արամ Իսաբեկյանը ծնվել է 1952թ. Երեւանում: Ավարտել է Երեւանի գեղարվեստաթատերական ինստիտուտը: ՀՀ Նկարիչների միության անդամ է: 1994 թվականից Երեւանի Գեղարվեստի պետական ակադեմիայի ռեկտորն է:

-Հայրս երբեք ինձ խորհուրդ չի տվել նկարիչ դառնալ, ոչ էլ արգելել է: Նա վստահ էր, որ ես երաժշտական լավ լսողություն ունեմ եւ երազում էր, որ Արամ Խաչատրյանի պես կոմպոզիտոր դառնամ: Դաշնամուրի էի գնում, բայց ատում էի նվագելը: Մորս մահից հետո (12 տարեկան էի) որոշեցի այլեւս չգնալ դաշնամուրի...

Ես բոլորովին ուրիշ շրջապատի մեջ էի, ուրիշ կյանքով էի ապրում, ազատ տղա էի, ազատ ընկերներ ունեի: Բայց նաեւ ընթերցասեր էի եւ կարդում էի արվեստի մարդկանց նամակները, արվեստի մասին նրանց մտքերը, ուսումնասիրում նրանց նկարները, կենսագրությունները: Բարեբախտաբար, շուտ խելքի եկա՝ կտրվելով այդ շրջապատից: Սկսեցի պարապել ընդունելության քննությունների համար, որի մասին հայրս տեղյակ չէր: Այսպես, իմ ցանկությամբ եւ ուժերով ընդունվեցի Գեղարվեստաթատերական ինստիտուտ՝ ընտրելով իմ հետագա ճանապարհը:

-Ձեր հոր անունը կամ միջնորդությունն օգնե՞լ է կյանքում:

- Ինչ խոսք, եթե մեկի հայրը հարգված մարդ է, վարպետ է, դասախոս, ուրեմն անկախ ամեն ինչից նրան հարգող եւ սիրող մարդիկ հարգում եւ սիրում են նրա զավակին: Հայրս նախանձողներ եւ չսիրողներ էլ ուներ, ովքեր չէին սիրում նաեւ ինձ:

Նա չէր սիրում ինձ հովանավորել, իր անունով աջակցել իմ գործերին: Երբ ընտրվում էի Գեղարվեստի ակադեմիայի ռեկտոր, նա միակ մարդն էր, որ դեմ քվեարկեց: Ոչ միայն՝ որ մնամ մաքուր ստեղծագործող (պաշտոններից հեռու), այլեւ հայրական վախ ուներ՝ ազնիվ արվեստագետի, որ այս աշխարհին իր բոլոր ելեւէջներով կարող է դժվար լինել իր զավակի համար: Նա գիտեր, որ առաջին շարքերում գտնվող մարդկանց կյանքը հեշտ չի լինում, նրանք թշնամիներ շատ են ունենում: Նա ուզում էր, որ ես զերծ լինեմ չար մթնոլորտից:

-Սերունդների երկխոսությունը կայանո՞ւմ էր, տարաձայնություններ չէի՞ն լինում:

-Իմ ու հորս միջեւ վեճեր միշտ եղել են մինչեւ նրա կյանքի վերջը: Ամեն ինչի՝ արվեստի, քաղաքականության, ընտանիքի, երեխաներին դաստիարակելու վերաբերյալ: Դրանք կառուցողական վեճեր էին:

Կարծում եմ, որ հակառակվելը սխալ չէ, ծնողներն են սխալ, եթե պարտադրում են զավակներին՝ հլու-հնազանդ ենթարկվել իրենց: Երիտասարդը պետք է ըմբոստ լինի: Ես ըմբոստ էի:

-Նա աշխատո՞ւմ էր Ձեր նկարների վրա թեկուզ սկզբնական շրջանում:

-Թույլ չէի տալիս, որ վրձինը ձեռքին մոտենա իմ նկարներին: Երբ դեռ արվեստանոց չունեի, միասին էինք նկարում նրա արվեստանոցում: Մի անգամ մտա գործս շարունակելու, տեսա՝ իմ նկարի վրա փոքր-ինչ աշխատել է, նեղացա, ասացի, որ ես այլեւս քեզ հետ չեմ աշխատելու եւ դուրս եկա նրա արվեստանոցից: Հետո, երբ մեծացա, շատ-շատ էի գնահատում նրա կարծիքը, իսկ հիմա, երբ նա չկա, անընդհատ զգում եմ խորհուրդների եւ ներկայության կարիքը: Իր կյանքով նա սովորեցրել է, թե մարդն ինչպես պետք է սիրի հայրենիքը, ինչպես վերաբերվի ընտանիքին, ընկերներին, գործին... Նա իր օրինակով ցույց է տվել, թե ինչպես պետք է ապրել ճիշտ եւ նույնիսկ առողջ: Դրա համար էլ երկար եւ առողջ ապրեց...

Շարունակությունը՝ էջ 17



Էդվարդ Իսաբեկյանը Արամի հետ, 1955 թ.



Արամ Իսաբեկյան. «Հորս դիմանկարը», 1995 թ.

63. 63

ԱՐԱՄ ԻՍԱԲԵԿՅԱՆ

Հիշողության վրձնահարվածներ

Էդվարդ, Միհր եւ Արամ Իսաբեկյաններ

Սկիզբը՝ էջ 3

-Ունե՞ք համատեղ աշխատանք: Նկարչության մեջ ընդունված է աշակերտներին գաղափար եւ ուղղություն տալ:

- Նա աշխատում էր «Թաղում Իգդիրում» նկարի վրա, երբ տեսողությունը վատացավ: Շատ էր մտահոգվում, որ չի կարող նկարն ավարտին հասցնել: Մի քանի անգամ խնդրեց, որ իր ասածով այդ նկարն ավարտեմ: Ցավոք, իմ բազմազբաղ լինելու պատճառով չկարողացա նրա խնդրանքը կատարել: Հիմա այդ նկարը ցուցադրվում է անավարտ, նրա վերջին վրձնահարվածներով: Շատերն են իրենց աշակերտներին գաղափար եւ ուղղություն տալիս, բայց մենք այդպես էլ միասին նկար չստեղծեցինք:

-Գովասանքի արժանանո՞ւմ էիք:

-Շատ զուսպ էր, ուրիշների ներկայությամբ չէր գովաբանի: Իմ ամենամեծ քննադատը նա էր, ամենաշատ դժգոհությունը նրանից էի լսում: Իմ մասին ֆիլմ էին նկարահանում, որտեղ հայրս էլ պետք է խոսք ասեր: Ես հեռացա, որ չլսեմ նրան: Երբ դիտեցի ֆիլմը, հուզվեցի, որովհետեւ նման գովասանքի խոսքեր ինձ երբեք չէր ասել...

-Ձեզ ինչպե՞ս էր պատժում:

-Մորս մահից հետո իմ դաստիարակությամբ զբաղվում էին տատս, հորաքույրս, եւ չարաճճիություններիս համար հայրս չէր ինձ պատժողը: Մեծ հաշվով, նա բարի հայր էր եւ բարկությունն էլ արագ հումորի էր վերածում: Ինձ վրա երբեք ձեռք չի բարձրացրել: Ամեն մարդ իր կյանքն ունի, եւ պատիժը չի արգելում մարդուն իր ուզածն անել: Եթե ծնողը պատժի զավակին, բայց ինքն անթույլատրելի քայլեր անի, ի՞նչ կստացվի: Ես ամբողջ կյանքում տեսել եմ, որ հայրս օրական 7-8 ժամ նկարել է, սիրել է ընկերներին, հայրենիքը, խնջույքների մեջ է եղել, լավ աշակերտներ է ունեցել...

-Ձեր զավակների մասին պատմեք: Շարունակո՞ւմ են Ձեր ուղին:

-Որդիս՝ Միհրը, 30 տարեկան է, դուստրս՝ Աննան՝ 24: Ավարտել են Գեղարվեստի ակադեմիան, համակարգչային դիզայներներ են, ներկայումս դուստրս ուսումը շարունակում է Փարիզում: Ես դեմ էի, որ նրանք Գեղարվեստի ակադեմիան ավարտեն: Գոնե լավ է, որ դիզայնի ֆակուլտետն ընտրեցին: Ցանկացած մարդու մեջ նախանձ կա իր նույն գործն անողների հանդեպ: Այդ զգացողությունը չես ունենում միայն քո զավակի հանդեպ: Եթե նա զբաղվում է քո գործով, կուզենաս, որ շատ ավելի լավ անի: Եթե իմ զավակներն ինձանից թույլ նկարիչներ պետք է դառնային, ուրեմն ճիշտ է, որ չդարձան: Ես նրանց մեջ չեմ տեսել նկարչի շնորհքը: Բայց տեսնում եմ, որ դուստրս շատ է սիրում համակարգչային գրաֆիկան: Կարծում եմ, որ դա արվեստի ժամանակակից ձեւ է, նորություն է, լավ հեռանկարներ ունի:

- Հաճա՞խ են ապավինում Ձեր աջակցությանը:

-Իհարկե, բա ի՞նչ պիտի անեն, քանի դեռ իրենք չեն կարողանում ամուր կանգնել: Մենք՝ հայերս, առանձնահատուկ՝ վերաբերմունք ունենք զավակների հանդեպ. մինչեւ մեր կյանքի վերջը փորձում ենք պահել, դաստիարակել մեր զավակներին: Ի դեպ, հայրս այդպիսին չէր, նա ինձ ազատ է թողել: Ես այդպես չեմ իմ զավակների հանդեպ: Երեւի պետք է այսքան մտահոգվել: Եվրոպացիներն ասում են՝ զավակս, ես քեզ կյանք եմ տվել, ուսում, դե գնա, կայացրու քո որոշումները, ապրիր քո կյանքը: Ես գտնում եմ, որ դա ճիշտ է, բայց, ցավոք, ինքս այդպես չեմ կարողանում անել:

-Հայրերի եւ որդիների հարաբերությունների վերաբերյալ ի՞նչ կցանկանաք ավելացնել:

-Մեկ տարի է՝ հայրս հեռացել է մեզանից: Նրան կորցնելն ինձ համար շատ դաժան հարված էր, մեծ կորուստ: Վերջին տարիներին միասին էինք բնակվում Աշտարակի մեր առանձնատանը... Շատերն ասում են՝ 93 տարեկան մեծ մարդ էր, իր կյանքն ապրել էր... Համաձայն չեմ, շատ եմ զգում նրա բացակայությունը: Ես դեռ շիվարած եմ ու հաշտ չեմ մտքի հետ, որ նա այլեւս չկա: Նրա իմաստուն խոսքը եւ պահվածքը պակասում է իմ կյանքում:

Սիրան ԳՐԻԳՈՐՅԱՆ